Հաստատում եմ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սերգեյ Առաքելյան

17.12.2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Դավիթ Հակոբի Զիլֆիմյանի

«Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեաիրավական և քրեակատարողական բնութագիրը» թեմայով ԺԲ. 00.05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց քրեաիրավական, կրիմինալոգիական, քրեակատարողական բնութագրերի տարրերի, դրանց դրսևորման առանձնահատկությունների, իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների պատժի կրման և կատարման հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի, այդ խմբի անձանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկի գործունեության ուսումնասիրությանը:

Հեղինակը փորձել է մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը կարելի է համարել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ՀՀ-ում առաջին համապարփակ հետազոտությունը:

Հայաստանի պետաիրավական համակարգի զարգացման արդի շրջանն աչքի է ընկնում դրա նորմատիվ-իրավական հիմքերի արմատական բարեփոխումներով: Ընդհանուր ժողովրդավարական նպատակներից զատ՝ այդ բարեփոխումները հետապնդում են հանցավորության դեմ պայքարի ուժեղացման, հանցավոր

ենթամշակույթը վերացնելու նպատակներ, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում: Նշված բարեփոխումները վերաբերում են նաև քրեական պատիժներ կատարող հիմնարկներին ընդհանրապես և իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների պատիժը կատարող հիմնարկներին՝ մասնավորապես:

Արդի սոցիալ-քաղաքական իրավիճակում հանցավորության դեմ պայքարի ընդհանուր միջոցառումներից բացի անհրաժեշտ է մշակել ժամանակակից մոտեցումներին ու միջազգային փորձին համապատասխան քրեական պատիժների կատարման կազմակերպահրավական ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ հիմքեր: Այս համատեքստում հատուկ տեղ են զբաղեցնում իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց նկատմամբ նշանակված պատիժների կատարումը և դրա արդյունավետության բարձրացումը, որի կարևորությունը պայմանավորված է մի շարք գործոններով:

Այս և նմանատիպ այլ գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձանց հիմնահարցերը պահանջում են հրատապ ու անհետաձգելի տեսական հետազոտություն, դրա հիմքով արվող գիտագործնական առաջարկություններ:

Շարադրվածը, բնականաբար, վկայում է Դ. Զիլֆիմյանի կողմից ընտրված թեմայի արդիականության և հրատապության մասին:

Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ուսումնական գործընթացում:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, տասներկու ենթագլուխներից, եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից: Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության օբյեկտն ու առարկան,

ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանությունը և մեթոդները, տեսական, նորմատիվ և էմպիրիկ հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձի հիմնահարցը քրեակատարողական իրավունքի տեսության ու օրենսդրության համակարգում» վերտառությամբ, հեղինակը ներկայացնում է իրավապահ մարմինների նախկին աշխատակից «դատապարտյալի անձի» հասկացության իրավաբանական բազմիմաստությունը, ազատազրկման դատապարտվածների դասակարգման համատեքստում քննարկում է իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալի հիմնահարցը, նրանց անջատ պահելու օբյեկտիվ գործոնները:

Հիմնվելով կատարված ուսումնասիրության վրա՝ հեղինակը կատարում է մի շարք առաջարկներ: Դրանցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները: Իրավապահ մարմնի նախկին աշխատակիցները կամ նրանց հավասարեցված անձինք ազատազրկման դատապարտվելու դեպքում ունեն իրենց պատիժն անջատ կրելու իրավունք, որին համապատասխանում է քրեակատարողական ծառայության պարտականությունն ապահովելու այդ իրավունքը: Օրենսդրական նման կարգավորման պայմաններում քրեակատարողական իրավունքում «իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձը» կարող է ունենալ երկու կարգավիճակ՝ ընդհանուր և հատուկ: Ազատազրկման հետ կապված պատժի դատապարտվելիս նա վերածվում է հատուկ իրավական վիճակով դատապարտվածի և ունի այլ դատապարտյալներից պատիժն անջատ կրելու իրավունք: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձանց ազատազրկման ձևով պատժի կատարման ընթացքում անջատ պահելու սոցիոլոգիական հիմքը ՔԿՀ-ներում առկա հանցավոր ենթամշակույթն ու բարքերն են, դրա իրավաբանորեն ձևակերպված չափանիշը՝ այս անձանց նախկինում զբաղեցրած պաշտոնը կամ կատարած աշխատանքի բնույթը: Այսպիսի եզրակացությունից բխում է, որ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ազատազրկման դատապարտվածների դասակարգման տեսական

բովանդակությունը պետք է լրացվի հետևյալ հիմնադրույթով. ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման նպատակ պետք է ճանաչել նաև այդ անձանց անվտանգության ապահովումը, հետևաբար ազատազրկվածների դասակարգման մեթոդաբանությունը ոչ միայն պատժի կատարման ու կրման անահատականացման, այլ նաև ազատազրկման դատապարտվածների մի շարք անձնական և այլ բնույթի իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց է: Հետևաբար, անհրաժեշտ է կատարել տեսական վերաիմաստավորում և քրեակատարողական օրենսդրության սկզբունք ճանաչել դատապարտյալների անվտանգությունը և այդ մասով լրացնել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 5-րդ հոդվածը: Դրան համապատասխան անհրաժեշտ է նաև լրացում կատարել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝ ավելացնելով «ապահովել դատապարտյալի անվտանգությունը» ձևակերպումը, որով այն այլ խնդիրների հետ միասին կվերածվի ՀՀ քրեակատարողական օրենսդրության խնդրի:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտված անձի հիմնահարցը կրիմինալոգիական ուսմունքի համակարգում» վերտառությամբ, հեղինակը մանրամասն անդրադարձել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների անձի բնութագրի հասկացությանը, բնութագրի սոցիալ-ժողովրդագրական և քրեաիրավական առանձնահատկություններին:

Հեղինակը, սոցիոլոգիական հարցումների միջոցով մանրամասն ուսումնասիրելով իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների բնութագրի սոցիալ-ժողովրդագրական և քրեաիրավական առանձնահատկությունները, ներկայացրել է մի շարք արժեքավոր դիտարկումներ և առաջարկություններ: Դրանցից հատկանշական են հատկապես հետևյալները: «Հանցավորի անձ», ներառյալ նաև իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների վերաբերյալ ուսմունքում, այդ անձանց կառուցվածքային տարրերի հարցը վիճելի է: Գիտնականների կողմից առաջարկվող «հանցավորի անձ» (ներառյալ նաև իրավապահ մարմինների նախկին աշխատակից

անձանց) կառուցվածքում առաջադրվող հատկանիշների ամփոփ խմբերն են՝ սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական, քրեաիրավական, սոցիալական գործառույթներ, քրեակատարողական, շարժառիթային, հարբած կամ թմրանյութ օգտագործած վիճակում հանցանք կատարելը և այլն: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից պատիժը կրող դատապարտյալների տարիքային տվյալները վկայում են, որ հանցավորության կանխման միջոցառումներ մշակելիս հատկապես պետք է ուշադրություն դարձնել իրավապահ մարմինների 25-40 տարեկան աշխատակիցներին: Այդ տարիքն աչքի է ընկնում սոցիալ-գույքային կայացման տեսանկյունից, տարիքային այս խմբի ենթադրյալ ներկայացուցիչը դեռևս չի հասել որոշակի նյութական բավարարվածություն ապահովող պաշտոնների ու դրան հետևող աշխատավարձների: Աշխատավարձների ցածր լինելը այս տարիքային խմբում քրեածին գործոնի դեր է խաղում:

Աշխատանքի երրորդ գլխում՝ «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների իրավական վիճակի և անձի քրեակատարողական բնութագրի առանձնահատկությունները» վերտառությամբ, հեղինակը բավականին մանրամասն անդրադարձել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների իրավական վիճակի հիմնահարցերին, քրեակատարողական բնութագրի տարրերի վերաբերյալ տեսական մոտեցումներին, ազատազրկման կրման պայմաններին: Քննարկման առարկա են դարձել նաև իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների նկատմամբ կարգապահական ներգործության և վերասոցիալականացման հիմնահարցերը, միջավայրը ազատազրկման վայրերում, արտաքին սոցիալական կապերը, ինչպես նաև քրեակատարողական քաղաքականության և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործունեության հիմնահարցերը:

Պատժի կրման պայմանների՝ օրենքով ամրագրված տարրերի իրացվածության վերաբերյալ դատապարտյալների և ՔԿՀ-ի աշխատակիցների կարծիքների համեմատական ուսումնասիրության ու վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է մի շարք եզրակացությունների: Դրանցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները: Ազատազրկման կրման պայմանները, օրենսդրական իմաստի համաձայն, դատապարտյալի որոշակի հատուկ իրավունքների ու

օրինական շահերի նվազագույն համակցություն է, որը կոչված է երաշխավորելու դատապարտյալի՝ որպես մարդու սոցիալ-կենսաբանական պահանջմունքները: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների սոցիալական միջավայրի կրիմինալոգիական-սոցիոլոգիական հետազոտության հիման վրա հեղինակը եզրակացություն է կատարել այն մասին, որ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների սոցիալական միջավայրում, ի տարբերություն այլ ՔԿՀ-ների, խմբային բաժանում և հեղինակություններ գրեթե գոյություն չունեն, հանցավոր ենթամշակույթի բացասական բազմաթիվ նորմեր այս մասնագիտացված ՔԿՀ-ում չեն գործում: Դրա պատճառը նշված խմբի դատապարտյալների սոցիալ-հոգեբանական, մասնագիտական և այլ առանձնահատկություններն են, մասամբ նաև՝ ՔԿՀ-ի գործունեությունը:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշած խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Վերը շարադրվածի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ատենախոսական աշխատանքի առաջին գլխի առաջին պարագրաֆում (էջ 30) հեղինակը նշում է. «... Իրավապահ մարմինների շրջանակի հարցում կողմնորոշվելուց բացի կարևոր են «աշխատող», «աշխատակից» հասկացությունների իմաստները: »: Սակայն հաջորդիվ քննարկման առարկա դարձնելով «աշխատող» և «ծառայող» եզրույթների իմաստային տարբերությունը՝ հեղինակը բավարար չափով չի քննարկել և հիմնավորել «աշխատող» եզրույթի փոխարեն «աշխատակից» եզրույթն օգտագործելու առաջարկը, ինչի հետևանքով նման առաջարկը հիմնավորման առումով դարձել է խոցելի:

«Աշխատող» և «աշխատակից» եզրույթների տարբերության վերաբերյալ 30-րդ էջի շարադրանքում առկա են մտքի կառուցման (իմաստային անցման) որոշ թերություններ: Այսպես, սկզբում հեղինակը նշում

է, որ օրենսդիրը հատուկ խուսափել է «ծառայող» եզրույթից և օգտագործել «աշխատող» հասկացությունը, դրա մեջ դրել է լայն իմաստ՝ ներառելով և՛ աշխատողներին, և՛ ծառայողներին, և՛ քաղաքացիական պայմանագրով աշխատանք կատարողներին (հոգեբան, փորձագետ, գործակալ և այլն), այսինքն՝ անձինք, որոնք հաստիքային աշխատող (ծառայող) չեն, սակայն իրենց գործունեությամբ օժանդակում կամ քաղաքացիական պայմանագրի հիմքով օգնում են հանցավորության դեմ պայքար տանող մարմնին՝ իրականացնելու իր գործառույթները: Այս նախադասությամբ հիմնավորելով, որ «աշխատող» հասկացությունը ներառում է նաև քաղաքացիական պայմանագրով աշխատանք կատարողներին՝ հեղինակը այնուհետև նշում է. «... Հետևաբար ճիշտ է օգտագործել «աշխատակից» հասկացությունը, որ ներառում է և՛ աշխատանքային (ծառայողական) իրավունքի իմաստով աշխատողներին, և՛ քաղաքացիական պայմանագրով աշխատանք կատարողներին:»: Հիշատակված երկու նախադասությունների միջև առկա են իմաստային հակասություններ:

Կարծում ենք՝ «աշխատող» և «աշխատակից» եզրույթների իմաստային տարբերությամբ պայմանավորված այս հասկացություններից մեկի կիրառման նախապատվությունը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի:

Նշվածից բացի՝ հարց է առաջանում, թե տվյալ եզրույթների փոփոխությունը գործնականում ի՞նչ խնդիրներ կարող է լուծել:

2. Ատենախոսական աշխատանքով պաշտպանության ներկայացվող հիմնադրույթների 7-րդ կետում (էջ 14) հեղինակը նշում է. «... Այս փաստն արդեն իսկ վկայում է հանցավորության կառուցվածքի կայուն միտում. նախկինում կատարված նույնաբնույթ հանցագործությունները վերարտադրվում են: Այս օրինաչափությունը հիմնավորում է, որ անհրաժեշտ է սահմանափակել կամ իսպառ արգելել նախկինում հանցագործություն կատարած անձանց ծառայության հնարավորությունները իրավապահ ոլորտում: »:

Կարծում ենք՝ նման մոտեցումը խնդրահարույց է. հեղինակը մեղքի դրսևորման ձևով պայմանավորված որևէ տարբերակում չի անցկացրել:

Ուստի, կարծում ենք՝ անհրաժեշտ է հստակեցնել, թե նման մոտեցումը որքանով է արդարացված նախկինում անզգույշ հանցանք կատարած անձանց պարագայում:

3. Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե, բացի Ռուսաստանի Դաշնության փորձից, ներկայացվեր և իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ վերլուծվեր նաև խնդրո առարկայի հետ կապված այլ պետությունների փորձը: Ասվածը հիմնականում վերաբերում է հետխորհրդային պետություններին, որտեղ իրավապահ մարմինների աշխատող կամ նախկին աշխատող դատապարտյալները նույնպես պահվում են անջատ:

Այնուհանդերձ, ներկայացված նկատառումները չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած թվով վեց հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Հետևաբար, Դավիթ Հակոբի Զիլֆիմյանի «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեաիրավական և քրեակատարողական բնութագիրը» թեմայով ատենախոսական հետազոտությունն արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն, հետաքրքիր, ինքնուրույն ուսումնասիրություն է, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Դավիթ Հակոբի Զիլֆիմյանի «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեաիրավական և քրեակատարողական բնութագիրը» վերտառությամբ

ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ. 00-05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Ատենախոսությունը քննարկվել ու 2020 թվականի դեկտեմբերի 10-ից 15-ը դրվել է գրավոր քվերակության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդում և արժանացել գիտական խորհրդի անդամների դրական եզրակացությանը:

Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր,
ի.գ.թ., դոցենտ **Անահիտ Մանասյան**

Հաստատում եմ՝
Արդարադատության ակադեմիայի
գիտական խորհրդի քարտուղար **Պետիկ Մկրտչյան**